ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ N 2

ՀՀ ՏՄՊՊՀ-ԳՀԱՊՁԲ-19/17 ԾԱԾԿԱԳՐՈՎ ԳՆՄԱՆ ԸՆԹԱՑԱԿԱՐԳԻ ԳՆԱՀԱՏՈՂ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ ՆԻՍՏԻ

ք. Երևան «25» դեկտեմբերի 2019թ.

2019թ-ի դեկտեմբերի 20-25-ը, ՀՀ, ք. Երևան, Միհեր Մկրտչյան 5 բ. հասցեում գտնվող Հայաստանի Հանրապետության տնտեսական մրցակցության պաշտպանության պետական հանձնաժողովի շենքում տեղի ունեցավ ՀՀ ՏՄՊՊՀ-ԳՀԱՊՁԲ-19/17 ծածկագրով գնման ընթացակարգի գնահատող հանձնաժողովի (այսուհետ՝ հանձնաժողով) նիստը: Հանձնաժողովի նիստին մասնակցում էին հանձնաժողովի հետևյալ անդամները՝

Ն. Դավթյան	Հանձնաժողովի վարչատնտեսական վարչության պետի ժ/պ.
Հ. Սարգսյան	Հանձնաժողովի գերիշխող դիրքի և հակամրցակցային համաձայնությունների վերահսկողության բաժնի պետի ժ/պ.
Զ. Մելքումյան	Հանձնաժողովի գերիշխող դիրքի և հակամրցակցային համաձայնությունների վերահսկողության բաժնի պետի ժ/պ.
Մ. Ղազարյան	Հանձնաժողովի հաշվապահական հաշվառման բաժնի պետ-գլխավոր հաշվապահի ժ/պ.
Թ. Զուլալյան	ՀՀ ՏՄՊՊՀ ՀՑ ադմինիստրատոր և SS համակարգող.

Հանձնաժողովի նիստին ներկա էր հանձնաժողովի քարտուղար Տիրան Լաճիկյանը՝ «Լաճ Գրուպ» ՍՊԸ ներկայացուցիչ:

Հաշվի առնելով, որ հանձնաժողովի նիստին մասնակցում էին հանձնաժողովի բոլոր անդամները, հետևաբար՝ Հայաստանի Հանրապետության կառավարության 2017 թվականի մայիսի 04-ի N 526-Ն որոշման 1-ին կետով հաստատված կարգի 26-րդ կետի 2-րդ ենթակետի համաձայն, հանձնաժողովի նիստը համարվեց իրավազոր և հայտարարվեց բացված:

Հանձնաժողովի նիստը նախագահում էր Ն. Դավթյանը, իսկ քարտուղարն էր՝ Տիրան Լաճիկյանը:

ՕՐԱԿԱՐԳ

1. ՀՀ ՏՄՊՊՀ-ԳՀԱՊՁԲ-19/17 ծածկագրով գնման ընթացակարգին մասնակցելու հայտեր ներկայացրած անձանց, վերջիններիս կողմից ներկայացված հայտերի գնահատման և առաջարկված գների մասին:

2. Ընտրված և հաջորդաբար տեղեր զբաղեցրած մասնակիցներ որոշելու մասին:

3. Պայմանագիր կնքելու որոշման մասին հայտարարության տեքստը հաստատելու մասին:

1. ՀՀ ՏՄՊՊՀ-ԳՀԱՊՁԲ-19/17 ԾԱԾԿԱԳՐՈՎ ԳՆՄԱՆ ԸՆԹԱՑԱԿԱՐԳԻՆ ՄԱՍՆԱԿՑԵԼՈՒ ՀԱՅՏԵՐ ՆԵՐԿԱՅԱՑՐԱԾ ԱՆՁԱՆՑ, ՎԵՐՋԻՆՆԵՐԻՍ ԿՈՂՄԻՑ ՆԵՐԿԱՅԱՑՎԱԾ ՀԱՅՏԵՐԻ ԳՆԱՀԱՏՄԱՆ ԵՎ ԱՌԱՋԱՐԿՎԱԾ ԳՆԵՐԻ ՄԱՍԻՆ

Հանձնաժողովի նախագահ Ն. Դավթյանը նիստը հայտարարեց բացված և հրապարակեց գնման հայտով սահմանված՝ տվյալ ընթացակարգի շրջանակում գնվելիք գնվելիք գնման առարկաների գները:

Հ/Հ	Գնման առարկայի անվանումը	Գնման հայտով սահմանված ընդհանուր գինը
1.	Հաշվապահական համակարգչային ծրագրային փաթեթներ	1870000

ՀՀ ՏՄՊՊՀ-ԳՀԱՊՁԲ-19/17 ծածկագրով գնման ընթացակարգի հայտերը բացվել են www.armeps.am կայքի միջոցով հրավերով սահմանված օրը և ժամին՝ 2019 թվականի դեկտեմբերի 20-ին, ժամը «17:15»-ին:

Հրավերում փոփոխություններ չեն կատարվել, այլ հարցումներ և հիմնավորումներ չեն ներկայացվել:

ՀՀ ՏՄՊՊՀ-ԳՀԱՊՁԲ-19/17 ծածկագրով գնման ընթացակարգին մասնակցելու հայտեր են ներկայացրել հետևյալ անձինք /այսուհետ՝ նաև մասնակիցները/.

Հ/Հ	Մասնակցի անվանում	Հասցեներ	Էլ, փոստ
1	«ԼԻՆԿ» ՍՊԸ	ք. Երևան, Կոմիտաս 49	Link_support@link.am

Հանձնաժողովն արձանագրեց, որ՝

- Հայտը կազմվել և ներկայացվել է ՀՀ ՏՄՊՊՀ-ԳՀԱՊՁԲ-19/17 ծածկագրով գնման ընթացակարգի /այսուհետ՝ ընթացակարգ/ հրավերի /այսուհետ՝ հրավեր/ պահանջներին համապատասխան.,
- Ներկայացված հայտում առկա են հրավերով պահանջվող բոլոր փաստաթղթերը., բացառությամբ հայտը ներկայացնողի՝ ստորագրողի համապատասխան լիազորություն

վերապահված լինելը հավաստող փաստաթղթի և համակարգում առաջին չափաբաժնի մասով ներկայացված չէ գնային առաջարկը.

• Ներկայացված հայտում ներառված փաստաթղթերը համապատասխանում են հրավերով սահմանված վավերապայմաններին, բացառությամբ ներկայացված ապրանքի ամբողջական նկարագրի՝ հավելված N 1.1, թերի է լրացված տեխնիկական բնութագիրը:

Հանձնաժողովի նախագահը հայտարարեց հայտ/ ներկայացրած մասնակցի գնային առաջարկները՝ հիմք ընդունելով տառերով գրվածը.

Ներկայացված գնային առաջարկների և մասնակիցների ընտրված և հաջորդաբար տեղեր զբաղեցրած լինելու վերաբերյալ տեղեկատվությունը ներառված է ստորև ներկայացված աղյուսակում (այսուհետ՝ Աղյուսակ):

(ՀՀ դրամ)

Հ/հ	Մասնակցի			Մասնակիցների առաջարկած գները՝	
	Զբաղեցրած տեղ	Ընտրված մասնակցի դեպքում նշվում է «X»	Անվանում	Արժեք	Ընդհանուր գին
1*	-	-	«ԼԻՆԿ» ՍՊԸ	**1 790 000**	**2 148 000**

*տվյալ չափաբաժինների մասով վարվել են բանակցություններ, արդյունքները ներկայացված են ստորև:

Որոշվեց՝

1. Հանձնաժողովի նախագահի կողմից ներկայացված տեղեկատվությունն ընդունել ի գիտություն.
2. Նիստը ընթացակարգի 4-րդ չափաբաժնի մասով կասեցնել 5 աշխատանքային օրով:
3. Քարտուղարին՝ ծանուցել «ԼԻՆԿ» ՍՊԸ-ին՝ առաջարկելով սահմանված կարգով շտկել արձանագրված անհամապատասխանությունը:
4. Քարտուղարին՝ ծանուցել «ԼԻՆԿ» ՍՊԸ-ին բանակցությունների մասին:

Կողմ՝ 5
Դեմ՝ 0

Հանձաժողովն արձանագրեց, որ «ԼԻՆԿ» ՍՊԸ-ի կողմից սահմված կարգով իրականացվել է արձանագրված անհամապատասխանությունների շտկումը:

Որոշվեց՝

1. «ԼԻՆԿ» ՍՊԸ-ի հայտը 1-ին չափաբաժնի մասով գնահատել բավարար:

2. ԸՆՏՐՎԱԾ ԵՎ ՀԱՋՈՐԴԱԲԱՐ ՏԵՂԵՐ ԶԲԱՂԵՑՐԱԾ ՄԱՍՆԱԿԻՑՆԵՐ ՈՐՈՇԵԼՈՒ ՄԱՍԻՆ:

Հանձնաժողովն արձանագրեց իր կողմից պատճառաբանված որոշման բացակայությունը՝ Կարգի 67-րդ կետի հիման վրա ՀՀ պետական եկամուտների կոմիտեի միջոցով մասնակցի (մասնակիցների)՝ Օրենքի 6-րդ հոդվածի 1-ին մասի 2-րդ կետին բավարարելու մասին հայտով ներկայացված հավաստման իսկությունը ստուգելու:

Հաշվի առնելով այն, որ բավարար գնահատված հայտեր ներկայացրած «ԼԻՆԿ» ՍՊԸ-ի գնային առաջարկը գերազանցում է ՀՀ ՏՄՊՊՀ-ԳՀԱՊՁԲ-19/17 ծածկագրով գնման ընթացակարգի 1-ին չափաբաժնով գնում կատարելու համար գնման հայտով սահմանված գինը, և համաձայն Հայաստանի Հանրապետության կառավարության 2017 թվականի մայիսի 04-ի N 526-Ն որոշման 1-ին կետով հաստատված կարգի 40-րդ կետի 5-րդ ենթակետի՝ մասնակց հետ վարվեցին միաժամանակյա բանակցություններ՝ առաջարկված գների նվազեցման նպատակով:

Բանակցությունների համար սահմանվեց ժամկետ՝ 15 րոպե տևողությամբ:

Բանակցությունների վերջնաժամկետին «ԼԻՆԿ» ՍՊԸ-ի կողմից առաջարկած վերջնական գինը սահմանվեց 1 558 333,3 ՀՀ դրամ /առանց ԱԱՀ/:

Որոշվեց՝

1. Որպես ընթացակարգի 1-ին չափաբաժնի մասով ընտրված մասնակից հայտարարել «ԼԻՆԿ» ՍՊԸ-ին:

Կողմ՝ 5
Դեմ՝ 0

3. ՊԱՅՄԱՆԱԳԻՐ ԿՆՔԵԼՈՒ ՈՐՈՇՄԱՆ ՄԱՍԻՆ ՀԱՅՏԱՐԱՐՈՒԹՅԱՆ ՏԵՔՍՏԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Հանձնաժողովի քարտուղարը ներկայացրեց պայմանգիր կնքելու որոշման մասին հայտարարության տեքստի նախագիծը:

Որոշվեց՝

1. Հաստատել պայմանագիր կնքելու որոշման մասին հայտարարության տեքստը՝ համաձայն հավելվածի:

Կողմ՝ 5

Դեմ՝ 0

Հանձնաժողովի նախագահ՝

Ն. Դավթյան _____

Հանձնաժողովի անդամներ՝

Հ. Սարգսյան _____

Զ. Մելքումյան _____

Մ. Ղազարյան _____

Թ. Զուլալյան _____

Հանձնաժողովի քարտուղար՝

Տ. Լաճիկյան _____